Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունք՝ զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին աթոռս, զհաս տանց քահանայից և զամենայն ընդանեաց նոցա, զերախայրիս կալոց և զհընձանաց, զՏեառնականս և զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց կենդանեաց և զյանկարծամահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորայ, զուարթ և առատ սրտիւ. որպէս զի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած։ Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ սմա կամ հրամանիս մեր, և արգելցէ յիրաւանց տալոց կամ խորհեսցէ, կամ յազգ անկանի և ուժ հասուցանէ Տէր Յոհանէսիս. զի որ ոք որ հակառակ լիցի սմայ, նայ այնպիսի առցէ յԱստուծոյ զանէծսն Կաենի, զմասն Յուդայի և զխաչահանուացն։ Որով աւրհնեալքն ի Տէր Յոհանիսէս՝ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և որոշեալքն՝ ի նմին մնասցեն, մինչև զղջասցին։ Վասն որո ի մտանել դորա և աւրհնութեան հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ մեռանիս, իջցէ և շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր էաւթնպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ. բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն, զպատուհաս և զտարաժամ մահ. տացէ ձեզ չինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. և ամենայն բարեաց ձեր լիութիւն և առատութիւն. և աւրհնեսցէ զձեզ զամենեսեան Քրիստոս Աստուած մեր։

Շնորհեցաք ի ձեռն դորա ձեզ պարգևս հոգևորական՝ զեղն աւծութեան, զաստուածագործակ սուրբ մեռոնն, ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւն՝ յորդէգրութիւն Հաւրն երկնաւորի, և ի ժառանգակցութեան Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյն ի ճակատ նշան հաստատութեան յաւծումն քահանայութեան, ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, աւրհնելոյն յամենայն յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ գիր աւրհնութեան բարձր հրամանիս մեր՝ ի յլուստ ի մեզ մարդեղութեանն և ծննդեանն մարմնով Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԳՃՂ ամի, և ի Սրբոյն Գրիգորէ ՌՂ ամի. եւ մեծ թուիս Հայոց ՊԼԷ ամի. ի մեր նըստիլս ի սուրբ աթոռս՝ որ է ամ Է և ամիս ութ և աւր ԺԷ, ի յաւգուստոս ամսոյ ԺԸ. ի փառս Քրիստոսի։ Եւ վասն առաւել հաստատութեան և ավտալո՝ ձեռնագրեցաք մեր սովորական կարմիր ձեռնագրովս։ Կնքեցաւ վերոյ ամէներևելի ծաղկաւետ մեծ մատանովս. կամաւք բարերարին Աստուծոյ աւրհնելոյն ի յամենայն յաւիտեանս. ամէն։

† ԹԷՈԴՈՐՈՍ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։